ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք)՝

1) 2-րդ հոդվածի՝

ա. «անբավարար տեսանելիություն» հասկացությունից հանել «, ինչպես նաեւ օրվա մութ ժամանակ, աղջամուղջի ու մթնշաղի ժամանակ» բառերը,

բ. «մոտոցիկլետ» հասկացությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «մոտոցիկլ՝ կողային կցորդով կամ առանց դրա երկանիվ մեխանիկական տրանսպորտային միջոց։ Մոտոցիկլին են հավասարեցվում նաեւ լրակազմված և լցավորված վիճակում առանց վարորդի, բեռի եւ ուղեւորների՝ մինչեւ 400 կգ զանգվածով եռանիվ մեխանիկական տրանսպորտային միջոցները, ինչպես նաեւ մոտոռամենագնացները (քվադրոցիկլները).»,

գ. «հարկադրված կանգառ» հասկացությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Կանգառի համար օրենսդրությամբ սահմանված կանոնները չեն տարածվում հարկադրված կանգառի դեպքերի վրա։»,

դ. «հետիոտն» հասկացության մեջ «մոտոցիկլետ» բառը փոխարինել «մոտոցիկլ» բառով,

ե. «մոպեդ» հասկացության մեջ «կիլոմետր-ժամ» բառերը փոխարինել «կմ/ժ» բառով,

զ. «օրվա մութ ժամանակ» հասկացությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «օրվա մութ ժամանակ՝ մթնշաղի վեջի և աղջամուղջի սկզբի միջև ընկած ժամանակահատվածը.»։

2) 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հասկացություններով.

«ավտոգնացք՝ կցորդի (կիսակցորդի) հետ կցված մեխանիկական տրանսպորտային միջոց (Քարշակման համար միմյանց կցված մեխանիկական տրանսպորտային միջոցները ավտոգնացք չեն համարվում).

Ձիջել ճանապարհը այլ տրանսպորտային միջոցներին՝ վարորդը չպետք է շարունակի կամ վերսկսի շարժումը կամ կատարի որևէ մանևր, եթե դա կարող է այլ տրանսպորտային միջոցների վարորդներին ստիպել անսպասելի փոխել շարժման ուղղությունը կամ արագությունը։»։

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 9-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի «իգ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«իգ) սահմանում է ոստիկանության կողմից հաշվառման տվյալների փոփոխությամբ տրանսպորտային միջոցների վերասարքավորման և առանց թույլտվության վերասարքավորված տրանսպորտային միջոցների վերահաշվառման թույլտվություն տալու կարգերը.»,

2) 1-ին մասը «իզ» կետից հետո լրացնել նոր «իէ» կետերով հետևյալ բովանդակությամբ.

«իէ) սահմանում է Հայաստանի Հանրապետության բնակավայրերի՝ բեռնատար ավտոմոբիլների երթևեկությունն արգելված փողոցներում բեռնափոխադրումների իրականացման նպատակով բեռնատար ավտոմոբիլների երթևեկությունը թույլատրող ժամանակավոր թույլտվության ձևը և տրման կարգը.»։

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 10-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի «զ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«զ) տալիս է հաշվառման տվյալների փոփոխությամբ տրանսպորտային միջոցների վերասարքավորման և առանց թույլտվության վերասարքավորված տրանսպորտային միջոցների վերահաշվառման թույլտվություն, բացառությամբ թափքը կամ հենասարքը համապատասխանաբար նույն եզրաչափերով թափքով կամ հենասարքով կամ շարժիչը նույն տեխնիկական բնութագրերով շարժիչով կամ տրանսպորտային միջոցի գույնը փոփոխելու դեպքերի.»,

2) 1-ին մասը «ժթ» կետից հետո լրացնել նոր «ի» և «իա» կետերով հետևյալ բովանդակությամբ.

«ի) սահմանված կարգով տալիս է Հայաստանի Հանրապետության բնակավայրերի՝ բեռնատար ավտոմոբիլների երթևեկությունն արգելված փողոցներում բեռնափոխադրումների իրականացման նպատակով բեռնատար ավտոմոբիլների երթևեկությունը թույլատրող ժամանակավոր թույլտվություն.

իա) տեղադրում է ճանապարհային լուսացույցներ և նշաններ, իրականացնում ճանապարհային գծանշումներ.»։

ՀՈԴՎԱԾ 4. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13.2 հոդվածով.

«Հոդված 13.2. Տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշները

1. Տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը պետության սեփականությունն է։

2. Տրանսպորտային միջոցը փոխելիս (օտարելիս) աճուրդով ձեռք բերված մեծ պահանջարկ ունեցող հաշվառման համարանիշն օգտագործողն այն ի պահ է հանձնում տրանսպորտային միջոցը հաշվառող մարմնին։ Եթե վեց ամսվա ընթացքում տվյալ համարանիշներն օգտագործողը կամ նրա մերձավոր ազգականը (հայր, մայր, եղբայր, քույր, ամուսին, զավակ) հաշվառման է ներկայացնում սեփականության իրավունքով իրեն պատկանող այլ տրանսպորտային միջոց, ապա այդ համարանիշները տրամադրվում են օգտագործողին կամ մերձավոր ազգականին՝ համարանիշների հատկացման համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարմամբ։

Նշված ժամկետում այլ տրանսպորտային միջոց հաշվառման չներկայացնելու դեպքում նա զրկվում է ի պահ հանձնված հաշվառման համարանիշն օգտագործելու առաջնահերթության իրավունքից։ Աճուրդով ձեռք բերված մեծ պահանջարկ ունեցող հաշվառման համարանիշն օգտագործողը կարող է ցանկացած պահի հրաժարվել այդ համարանիշի օգտագործման իրավունքից։

3. Աճուրդով ձեռք բերված մեծ պահանջարկ ունեցող հաշվառման համարանիշն օգտագործողը կարող է այդ համարանիշն օգտագործելու իրավունքը փոխանցել սույն հոդվածի 2-րդ մասում նշված մերձավոր ազգականին՝ համարանիշների հատկացման համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարմամբ։

4. Աճուրդով ձեռք բերված մեծ պահանջարկ ունեցող հաշվառման համարանիշն օգտագործողը կարող է այդ հաշվառման համարանիշը ցանկացած ժամանակ վերահաշվառել սեփականության իրավունքով իրեն կամ սույն հոդվածի 2-րդ մասում նշված մերձավոր ազգականին պատկանող այլ տրանսպորտային միջոցի վրա՝ համարանիշների հատկացման համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարմամբ։

5. Աճուրդով ձեռք բերված մեծ պահանջարկ ունեցող հաշվառման համարանիշն օգտագործելու իրավունքը սույն հոդվածի 2-րդ մասում նշված մերձավոր ազգականին փոխանցելու դեպքում համարանիշն օգտագործողի ներկայությունը և համաձայնությունը պարտադիր է։

6. Աճուրդով ձեռք բերված մեծ պահանջարկ ունեցող հաշվառման համարանիշն օգտագործելու իրավունքը կարող է փոխանցվել տրանսպորտային միջոցը ժառանգած անձին՝ համարանիշների հատկացման համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարմամբ։

7. Եթե մեծ պահանջարկ ունեցող հաշվառման համարանիշի օգտագործման իրավունքի աճուրդի հաղթողը հրաժարվում է ձեռք բերել համարանիշի օգտագործման իրավունքը, ապա նախավճարը չի վերադարձվում և նրանից գանձվում է տուժանք՝ լոտի ձեռքբերման համար իր կողմից առաջարկված գնի 20 տոկոսի չափով, իսկ աճուրդի հաղթող է ճանաչվում նախորդ բարձր գին առաջարկած մասնակիցը, որի կողմից համարանիշի օգտագործման իրավունքը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում նույնպես նախավճարը չի վերադարձվում և նրանից գանձվում է տուժանք՝ լոտի ձեռքբերման համար իր կողմից առաջարկված գնի 20 տոկոսի չափով։ Տուժանքի գումարը կամավոր չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման դատական կարգով։

8. Աճուրդով ձեռք բերված մեծ պահանջարկ ունեցող հաշվառման համարանիշերի օգտագործման իրավունքը սույն հոդվածի 2-րդ մասում նշված մերձավոր ազգականին կարող է փոխանցել միայն տվյալ համարանիշն առաջին անգամ օգտագործելու իրավունք ունեցած անձը, բացառությամբ ժառանգությամբ կամ տվյալ համարանիշերն առաջին անգամ օգտագործելու իրավունք ունեցած անձանց փոխանցելու դեպքերի։

9. Տրանսպորտային միջոցների հաշվառման մեծ պահանջարկ ունեցող համարանիշների հատկացման աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից հինգ բանկային օրվա ընթացքում նախավճարը վերադարձվում է աճուրդում չհաղթած մասնակիցներին։

10. Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմերի տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերը սահմանում է Հայաստանի Հանրապետության վարչապետը։

11. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու, Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորների, Հայաստանի Հանրապետության կառավարության անդամների, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Հայաստանի Հանրապետության դատարանների, Հայաստանի Հանրապետության դատախազության, Հայաստանի Հանրապետության Վերահսկիչ պալատի, Հայաստանի Հանրապետության մարզպետների, ինչպես նաև պետական կառավարչական հիմնարկների ու տեղական ինքնակառավարման մարմինների (բացառությամբ նրանց կողմից ստեղծված կազմակերպությունների, անկախ կազմակերպաիրավական ձևի) տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերը սահմանում է ոստիկանության պետը։»։

ՀՈԴՎԱԾ 5. Օրենքի 15-րդ հոդվածի՝

1) 1-ին մասից հանել «և դրանց կցորդները» բառերը,

2) 2-րդ մասի երկրորդ պարբերության առաջին նախադասությունը լրացնել «՝ մինչև հաշվառման կտրոնի վրա նշված (փակցված կամ դակված) ամսվա վերջին օրը» բառերով,

3) 4-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Տեխնիկական զննությունն իրականացնում են տրանսպորտային միջոցի տեխնիկական զննության գործունեության լիցենզիա ունեցող կազմակերպությունները, բացառությամբ տրամվայների և տրոլեյբուսների, որոնց տեխնիկական զննությունն անցկացնում են դրանք շահագործող կազմակերպությունները։»,

4) 6-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված տեղում» բառերը փոխարինել «վարորդի կողմից առջևի հողմապակու ներքևի աջ անկյունում, բացառությամբ կցորդի (կիսակցորդի), որի տեխնիկական զննության կտրոնը պետք է գտնվի քարշակող տրանսպորտային միջոցի վարորդի մոտ» բառերով։

ՀՈԴՎԱԾ 6. Օրենքի 17-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասում «առաջին մասով և երկրորդ մասի «ա», «դ», «ե», «զ» և «է» կետերով» բառերը փոխարինել «առաջին մասի «ա», «բ», «գ», «դ», «ե», «զ», «է», «ը», «թ», «ժ», «ժգ», «ժդ» և «ժզ» կետերով» բառերով,

2) 6-րդ մասում «առաջին մասի «ա» կամ երկրորդ մասի «բ» կետերում» բառերը փոխարինել «առաջին մասի «ա» կամ «ժա» կետերում» բառերով։

ՀՈԴՎԱԾ 7.

1. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժէ» կետով՝

«ժէ. բացակայում են վարորդի աչքը կամ վերին կամ ստորին վերջույթը, դաստակը կամ ոտնաթաթը, կամ առկա է շարժումները սահմանափակող՝ դաստակի կամ ոտնաթաթի ձեւախախտում, ինչպես նաև ձեռքերի մատների կամ ֆալանգների ձևախախտումներ և արատներ, որոնք հանգեցնում են վերջույթի ֆունկցիաների խիստ խանգարման, բացառությամբ տվյալ անձի հնարավորություններին հարմարեցված տրանսպորտային միջոցներ վարելու դեպքերի.»։

2. Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասում «մոտոցիկլետների» բառը փոխարինել «մոտոցիկլների» բառով։

3. Օրենքի 18-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ և 5-րդ մասերով՝

«4. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքում տրանսպորտային միջոցի հետախուզում հայտարարվում է ոստիկանության պետի (տեղակալների) կամ ոստիկանության պետի կողմից լիազորված պաշտոնատար անձանց կողմից։

5. Տրանսպորտային միջոցի հետախուզում կարող է հայտարարվել, երբ տվյալ տրանսպորտային միջոցով կատարվել է իրավախախտում։»։

ՀՈԴՎԱԾ 8. Օրենքի 18.1-րդ հոդվածի 1-ին մասում «և «ժզ»» բառերը փոխարինել ««ժզ» և «ժէ»» բառերով։

ՀՈԴՎԱԾ 9. Օրենքի 24-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասի 4-րդ կետի «գ» ենթակետում «մոտոցիկլետով» բառը փոխարինել «մոտոցիկլով» բառով.

2) 7-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «է» կետով՝

«է. տրանսպորտային միջոցից դուրս նետել առարկաներ։»։

ՀՈԴՎԱԾ 10. Օրենքի 25-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասում «մոտոցիկլետ» բառը փոխարինել «մոտոցիկլ» բառով.

2) 12-րդ մասում «տաքսու» բառը փոխարինել «մարդատար-տաքսի ավտոմոբիլի» բառերով։

ՀՈԴՎԱԾ 11. Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետում «մոտոցիկլետներով» բառը փոխարինել «մոտոցիկլներով և այլ մոտոտրանսպորտային միջոցներով» բառերով։

ՀՈԴՎԱԾ 12. Օրենքի 27-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի «ա» կետում «մոտոցիկլետներ» բառը փոխարինել «մոտոցիկլներ» բառով,

2. 1-ին մասի «գ» կետում «ավտոմոբիլներ» բառից առաջ լրացնել «բեռնատար» բառը,

3. 1-ին մասի «դ» կետում «ավտոմոբիլներ» բառից հետո լրացնել «(ավտոբուսներ)» բառը,

4. 3-րդ մասի «ե» կետի 2-րդ պարբերության մեջ «և» բառը փոխարինել «կամ» բառով.

5. 7-րդ մասում «վարելու» բառերից հետո լրացնել «իրավունքի» բառը։

ՀՈԴՎԱԾ 13.

1. Օրենքի 28-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1 և 1.2 մասերով՝

«1.1. Տրանսպորտային միջոց վարել սովորողը պետք է լինի առնվազն 16 տարեկան.

1.2. «A» և «B» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի վկայական ստանալու համար որակավորման քննություններին օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են մասնակցել նաև ինքնուս անձինք։»։

2. 8-րդ մասում «կցորդման» բառից հետո լրացնել «(բացառությամբ ավտոմատ փոխհաղորդակով (տրանսմիսիայով) տրանսպորտային միջոցների)» բառերը։

3. 11-րդ մասի 1-ին պարբերությունում «տարի» բառից հետո լրացնել «մինչև փետրվարի 1-ը» բառերը։

4. 11-րդ մասի 2-րդ պարբերության մեջ «70%-ը» բառերը փոխարինել «50%-ից ավելին» բառերով։

ՀՈԴՎԱԾ 14. Օրենքի 29-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով՝

«4. Սույն հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերով նախատեսված դեպքերում ոստիկանությունն իրավասու է վերցնել անձի վարորդական վկայականը։»։

ՀՈԴՎԱԾ 15. Օրենքի 32-րդ հոդվածի 1-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե» կետով՝

«ե) տրանսպորտային միջոցների արտադրությունը՝ նախագծման, փորձարկման և արտադրման փուլերում։»։

ՀՈԴՎԱԾ 16. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տրանսպորտային միջոցների հաշվառման (վերահաշվառման, հաշվառումից հանման) դեպքում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը տրանսպորտային միջոցներին հատկացված հաշվառման համարանիշների հետ կապված գործողությունները կատարվում են սույն օրենքով սահմանված կարգով։

ՀՈԴՎԱԾ 17. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից։

12.02.2010

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-491-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ հոդվածի 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1 և 2.2 ենթակետերով՝

«2.1) ձյունագնացը.

2.2) մոտոամենագնացը (քվադրոցիկլը).»։

Հոդված 2. Օրենք 7-րդ հոդվածի 3-րդ մասը «փոխադրամիջոցների» բառից հետո լրացնել «, ձյունագնացների և մոտոամենագնացների (քվադրոցիկլների)» բառերով։

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից։

12.02.2010

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ օրենք) 16-րդ հոդվածի 18-րդ, 27-րդ կետերը և 20-րդ հոդվածի 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչել։

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.1-րդ կետով՝

«17.1 մոտոփոխադրամիջոցների, կցորդների և բազային տուրքի

կիսակցորդների հաշվառման համարանիշներ վեցապատիկի չափով տալու համար»։

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից։

12.02.2010

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-204-Ն օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետը «լողամիջոցներ» բառից հետո լրացնել «, ձյունագնացներ և մոտոամենագնացներ (քվադրոցիկլներ)» բառերով։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՆԱԽԱԳԻԾ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 123-

րդ հոդվածի 8-րդ մասում «մոտոցիկլետները» բառը փոխարինել «մոտոցիկլները և մոտոամենագնացները (քվադրոցիկլները)» բառերով։

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 123,6-րդ հոդվածով՝

«ՀՈԴՎԱԾ 123.6. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով ձյունագնաց տրանսպորտային միջոցներ վարելը, բացառությամբ ճանապարհը ուղղահայաց հատելու դեպքերի՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով։»։

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից։

12.02.2010